Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 24-ի N 354 -Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՈՑԵԼԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ COVID-19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Աջակցություն երկրի՝ COVID 19-ի արձագանքին և դրա հետևանքների մեղմացմանը՝ ապահովելով սննդարար սննդի և հիմնական հիգիենայի պարագաների հասանելիություն խոցելի ընտանիքների համար ՀՀ Արմավիրի և Լոռու մարզերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Իզմիրլյան Բարեգործական Հիմնադրամ ՀՄԴ (Հասցե՝ Մելիք Ադամյան 2/1, 0010 Երևան, ՀՀ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արմավիրի և Լոռու մարզեր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,769,817 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1,147 սոցիալապես խոցելի բազմազավակ ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20.06.2020թ – 30.06.2020թ
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Պարենային միասնական զամբյուղի կազմում, պարենային զամբյուղների ձեռքբերում, սննդամթերքի և հիգիենիկ պարագաների փաթեթների բաշխում շահառուներին: Ժամանակահատված՝ 20 հունիսի 2020 թ. - 30 հունիսի 2020 թ. Բյուջե՝ 12,769,817 դրամ՝ այդ թվում պարենային ապրանքների ձեռքբերում՝ 12,010,237 դրամ, բեռնափոխադրման, վառելիքի և մեքենաների պահպանման ծախսեր՝ 616,000 դրամ կամավորների համար սնունդ 143,580 դրամ:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Մննդի և հիգիենիկ փաթեթների ձեռքբերում /զնումների կազմակերպում, տեսակավորում, պահեստավորում, որի գումարը կազմում է 12,010,237 դրամ 2. Բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 185,000 դրամ 3. Վառելիքի ձեռքբերում՝ 351,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 431,000 դրամ, որը ներառում է գործունեության կազմակերպման և մշտադիտարկման համար անհրաժեշտ վառելիքի ծախսեր՝ 351,000 դրամ և մեքենաների պահպանման ծախսեր 80,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ երկու մարզերում տեղական ինքնակառավարման մարզերի, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվական միջոցների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ավարտական հաշվետվություն «Իզմիրլյան» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուի կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Ինչպես նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված՝ Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ